№ 13 ՇԱԲԱԹ 9 ԱՊՐԻԼԻ № 13

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՌՁՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՐԵՆ 10 ՄԻՋԱԿ ՏԱՐՈՒԲ ՎՃԱՐՆ Է 1 ԿՈՊԵԿ: Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով.

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ՕՐ ՄԻ ԹԵՐԹ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 6 Ռ. Ստարաքաղաքացիք դիմում են ուղղակի Въ редак. газеты „Пчела Армянъ“.

ԹԻՖԼԻՍ 9-ԻՆ ԱՊՐԻԼԻ

Մեզուի անցեալ համարը իւր բովանդակութեամբ առիթ էր տուել ոմանց, մանաւանդ մեր գեր. եկեղեցականներից, դանագան ծակ մարդարէութեանց, գուշակութեանց և սոփեստական եղրակացութեանց—ուստի և հարկ ենք համարում այդ լոկ միամիտները գայթակղեցնելու դիտաւորութեամբ եղած խօսակցութեանց և դատողութեանց առթիւ մի քանի խօսք ասել:

Յայտնի է հայ ընթերցող և ազգային գործերով հետաքրքրվող հասարակութեանց, որ վերջին տարիներում հայ պարբերական հրատարակութիւնք յարձակողական և յանդիմանողական դիրք են բռնած անարժան եկեղեցականաց ոմանց վերաբերութեամբ. բայց ոչ ամբողջ եկեղեցականութեան: Այս դիրքն, որ բնական է, պարզ է որ դուրեկան չէ այդպիսի եկեղեցականաց և սոքա անկարող իրանց պաշտպանելու և անընդունակ ուղղվելու, կուրացած շահախնդրութեամբ, սկսում են միամիտներին խաբել Յանալու իրանց խելապատակին զօռ տալով, թէ պարբերական հրատարակութեանց այդ յարձակողական ուղղութիւնը միասակար է և թէ նոցա խմբագիրները դիտաւորութիւն ունին այդպիսով սառնացնել ժողովուրդը եկեղեցականներից և կրօնափոխութեան ասպարէզ բանալ ժողովրդոց մէջ: Սա հին երգն է, որ այդպիսի հակաժողովրդական եկեղեցականք երբեմն են: Նոքա կամենում են, որ ժողովուրդը միամիտ ճայ և իրանք առանց կոնտրոլի գործեն իրանց ուզածը: Մեր խօսքերը լաւն, ասում են նոքա, բայց ժողովրդի աչքը չտեսնեն: Այդ անհնարին է, քանի ժողովրդեան մտաւոր աչքը բացվել է, նոքա չեն կարող կոյր ձևանալ և չտեսնել տգիտութիւնը, շօշափելով իրանց մարդկային պատիւը, և ինչո՞ւ չտեսնեն: Իրանց պաշտպանութեան քաղցած պահին, տգիտութեան մէջ ընկղմած պահին, թէ ինչ է, որ մի քանի անարժան, եկեղեցականները նիւթապէս ապահոված լինին ժողովրդի հաշիւով: Անցան այդ երջանիկ ժամանակները հայ անարժան եկեղեցականների համար, անցան այն քաղցր ժամերն, երբ այսպիսի բաները կարող էին ծածկվիլ ժողովրդի աչքից: Քանի մեր իրանց դրծերից վախեցող եկեղեցականք հաշիւ և տեղեկութիւն չէին տալ իրանց գործունէութեան մասին, երբէք հանդիստ չէն կարող դանել—այս միջոցին, երբ ժողովրդեան մէջ դիտակցական և քննողական կարողութիւնքը զարգանալու վրայ են: Ա.յստեղ ոչ մի ծակ գուշակութիւն, ոչ մի զրպարտութիւն, ոչ մի խորամանկութիւն չէ օգնել—այս հանդամանքում միայն ճանապարհն է պարզութիւն և հնազանդութիւն ժողովրդեան շահերին և խոնարհումն նորա արդար ցանկութեանց և պահանջների առաջ:

Ինչ կվերաբերի հայ հրապարակական հրատարակութեանց յարձակողական զրոյցին, որին ծակ մարգարէները վերաբերում են դիտաւորութիւն սառեցնելու ժողովրդեան սիրտը դէպի եկեղեցականներն և կրօնափոխութեան ասպարէզ բանալու ժողովրդեան մէջ—դա անզօրի զէնք է միամիտները խաբելու համար: Թող և եկեղեցականք ոմանք պաշտպանեն հայ եկեղեցու և հայ եկեղեցականութեան պատիւն այնքան, որքան հայ պարբերական հրատարակութիւնք մեծ մասամբ, գուցէ և' ամբողջապէս: Հայ պարբերական հրատարակութիւնք միշտ պահանջել են և պահանջում հայ եկեղեցու պարզութիւնը պահպանել և նորա հոգւոյ համաձայն կրօնքը և դաստիարակված եկեղեցականներ, հայ եկեղեցականութիւնն երբէք փակ դասակարգ, իր արտօնութիւններով, չէ կազմել, ինչպես է այդ քաղթոլիկ եկեղեցու մէջ իւր անսխալական պապով: Հէնց այս ձգտումն է իսկապէս բողոքներ յարուցանողն ազգի հասկացողմասնի կողմից: Դեռ ևս օրինակ եղած չէ, որ մի հայ խմբագիր կրօնափոխութեան դիմած լինի, մինչև անգամ ամենանեղ վիճակի մէջ և հալածանաց ենթարկված, բայց շատ և շատ օրինակներ կան այդ կողմանէ դժբաղդաբար եկեղեցականաց և այն մինչև անգամ բարձրաստիճան եկեղեցականաց մէջ (գործօրինակ Սանտալճեան Սուրփան եպիսկոպոսը և այլք): Ազգի հասկացող մասնի ցանկացածը հէնց այն է, որ մեր եկեղեցականաց մէջ այնպէս ներշնչած լինի հայ եկեղեցու ազատ ոգին, որ նոքա ամեն նեղութեանց տանել կարողանան առանց օտարանալու նրանից, որ նոքա այդ ոգին ինչպէս իրանց մարմնոյ զգոնը ունենան անփոփոխելի և ոչ շափկի պէս ամեն օր և ամեն հանդամանքում փոխեն:

Երբ անարժան և շահասէր եկեղեցականք ոմանք կասկածում են բարեմիտ խըմբաղրների և ազգի հասկացող անդամների բարի դիտաւորութեան մասին—մենք էլ մեր կարծիքը յայտնենք այդպիսի եկեղեցականաց մասին և թող դատն ընթերցողք, թէ արդեօք մեր կարծիքն աւելի հաւանականութիւն չունի: Արդեօք այդ անարժան հայ եկեղեցականք իրանք գործիքչէն հայ ժողովուրդն իրանց գործերով զգուշացնելու և եկեղեցուց օտարացնելու համար, արդեօք չունի՞ն դիտաւորութիւն ամեն բան քանդելու և անչքացնելու հայ եկեղեցին և այդպէս նորանից ժողովրդեան հեռանալուն նպաստելու:

Մի այլ կարծիք ևս կարելի է յայտնել այնպիսի հայ եկեղեցականաց ոմանց մասին, որոնք ձգտում են ժողովրդեան միամտութեան մէջ պահել և պահանջում են նրանից անպայման հաւատարմութիւն և լռութիւն: Արդեօք դոքա չեն ձգտում կաղմելու հայ եկեղեցու մէջ մի եկեղեցական բիւրոկրատիա, առանձին արտօնութիւններով և անսխալականութեան իրաւունքներով նման քաթոլիկ կղերին, որ բոլորովին հակառակ է հայ եկեղեցու ոգուն—և. որ շարժում է հասկացող և բանիմաց հայերի մէջ բողոք դէպի այդպիսի ձգտումները:—Մենք կարծում ենք, որ աւելի հաւանականն այն է, որ հայ եկեղեցականներին ոմանց այս ձգտումները, միացած շատ չարագործութեանց հետ, որ տեղի են ունենում նոցա մէջ ի գայթակղութիւն ժողովրդոց, իսկապէս ազգում

ՔԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՀԱՐԱԻ

(Շարունակութիւն) (*)

Այս դիւղից փոքր ինչ հեռու ես տեսայ նորբերում փորած ջրանցքի առու, որոյ համար մեծ գումար մսխած ունէր դորա սկսողը այժմ հանգուցեալ Եղիազարեանցը:

Ոչինչ նուր չկար ջրանցքի մէջ, և արդէն մէկ քանի տեղերում ջրանցքը աւերվել էր: Սորա բարձի թողի վնասելու պատճառն այն է, որ հարթաչափը սխալ է արած, և երբ ջուրը փորձելին թողնել ջրանցքում, չը յաջողեցաւ անճըդուկեան պատճառաւ: Առ այժմ էլ տէր չկայ հանգուցեալի աշխատանքը չարունակելու— և այսպէս արած ծախքը իղուր վատնեցաւ: Խոբութիւնն այս առուի մօտ մէկ սաժէն էր:

Գանի մերձնում էի Սբ. Էջմիածնին, համբերութիւնս հատնում էր. բոպէն մէկ ժամ էր թուում: Եւ մեծ էր այն տպաւորութիւնն, երբ հեռուից առաջին անգամ տեսնեցաւ գմբէթի վերայ Քրիստոնէութեան նշանը, այդ էր Շողակաթի գմբէթի խաչն, որոյ պաշտման համար հազար ու հազար նահատակութիւններ են կրել նորան պաշտողները:

Կաթուղիկէ Էջմիածինը դրած է վաղարշապատ գիւղաքաղաքի մօտ, չըշապատակ ալիզ պատերով մի քանի սաժէն հաստութեան և բարձրութեան: Վաղարշապատը մի ժամանակ երուանդ արքայի մայրաքաղաքն էր և անուանվում էր Արտեմիզ կամ երբեմն Անահիտ: Արշակունիք այստեղ ունէին իրանց բնակութիւնը: Շապուհ թագաւորը IV դարու վերջերում այս քաղաքը, որ անուանվում էր Վաղարշապատ, պատերազմում յաղթելով առաւ և աւերեց, քանդեց նորա պատերը: Ա.ետևհետև կորցրեց քաղաքն իր պատմական նշանակութիւն իբրև մայրաքաղաք, բայց նորա մայր եկեղեցին Էջմիածինը մնաց իր հինաւ օրից անչարժ, թէ և քանի մի անգամ նորոգուեցաւ և զարդարուեցաւ կաթուղիկոսների հոգածողութեամբ՝ ինչպէս Ներսէս Շինողի, Մովսէս և եղիազար կաթուղիկոսների:

Մայր եկեղեցին չինած լինելով 303-ին՝ այժմ հնացել է. ներսը չորս սաժէն բարձրութեան վերայ ոչինչ զարդ չունի և սպիտակ է ներկած. Գմբէթը երկաթեայ գօտով պատած չատ հնացած է. Չորս սիւների զարդարանքը գրեթէ ամենևին չնչվել են և դժուար կարդացվում են արձանագրութիւնքը: Քարեայ յատակը նոյնպէս նորոգութիւն է պահանջում: Կարճ, ուր որ նայես, ամին տեղ հնութիւնն աչքի է ընկնում: Բայց և այնպէս հենց ներս մտնելուս սրբութիւնը տեղիս և հազար սրտաճմլիկ յիշատակարանք լցնում են ոգիդ երկիւղածութիւնով, տեսնելով քեզ նոյն իսկ տեղում, ուր որ Գրիգոր Լուսաւորիչն երազից չոգակաթ լոյսը, ուր հարիւրաւոր սբ. հարք, հրամանատարք և զօրականք մխիթարութիւն են տեսել, նահատակվել են Աստուծոյ եկեղեցին պաշտպանելու և ազգի կապը անիզելի պահելու համար:

Թէև ժամանակի մաշող ժանիքը և ազգի ազէտալի հանգամանքը քանի մի անգամ ամայացրել են սբ. տեղս, բայց տաճարի ճակատագիրն իւր անկման համբերութեամբ դիմացել է մրրկից և արիւնահեղ օրերին, մինչև այս օրս սրբութեամբ նորա նշանակութիւնը պահելով:

Կաթուղիկէին կից և կպած է նրա թանգարանը, ուր պահարանների մէջ պահած կան հնութեան գանձեր. գեղարդն Քրիստոսի, խաչեր, զգեստներ, թագեր, վեղարներ, գաւազանք, ղրամներ, և ուրիշ արծաթեղէն հնութիւնք, մատանիք, աջ ձեռն Գրիգորի Լուսաւորչի արծաթեայ պատեանի մէջ դրած նայես: Ասում են որ գլուխը գտնվում է Նէապոլիս քաղաքում, իսկ ձախ ձեռը— Սիս քաղաքում: Այս թանգարանի մէջ հաչուելու է և թանկագին քաղաթոռը, որն որ ուղարկած է Հռոմի պապ Ինոմվկենտիոսը Յովհաննէս կաթուղիկոսին:

Եկեղեցւոյ մէջ տեղում զարդարած չահերով չինած է սեղան Իջման, ուր լինում է պատարագ: Նորա թանկագին պատկերներից մինն է Աստուածածնինը, ընծայաբերութիւն Ներսէս Ե. կաթուղիկոսի Աշտարակեցւոյ:

Ինձ յաջողեցաւ լսել հրաչալի պատարագ, որ կատարուեցաւ Աստուածածնի խորանի վերայ որ չինած է, ինչպէս ասացի վերև, եկեղեցւոյ մէջ տեղում, որտեղ հղել է և լիլումն Միածնի, ըստ աւանդութեան:

Երիտասարդ գպիրք, աչակերտք նորակառոյց Հոգեոր Շեմարանի, կիսաչրջան կանգնած սեղանի առաջն, ձեռներին նոտաներ՝ հիանալի քաղցրութեամբ և ներդաշնակութեամբ երգում էին: Թէև առաջին անգամն էի լսում այս ձայները ուրիմն և խորհ լինձ համար, բայց այնուամենայնիւ չատ մեծ տպաւորութիւն յարուցին սրտիս խորքում, մեծ բաւականութիւն, երկիւղածութիւն ազդելով սբ. տաճարի մէջ գանվողների վերայ: Նիկողայոս Թաչճանը չրչապատած դպիրներով աննման ազդող եղանակով դղրդեցնում էր կաթուղիկէն, յիշեցնում էր բաղդատր օրերը հայ Հայրապետութեան:

Ժողովուրդը՝ մարդիկ և կանայք կանգնած էին ի միասին, չէին անջատվում երկաթեայ վանդակապատով, ինչպէս որ այս հասարակօրէն տեսնում ենք մեր եկեղեցիներում: Այս արժանի նուեցաւ ուշադրութեան, որպէս բացառութիւն մեր սովորութիւնից:

Բացի գլխաւոր սեղանը երկու կողմերի փոքրիկ խորանները, ուր լինում է ձեռնադրութիւն եպիսկոպոսաց և պատարագներ, ոչինչով իրանց վերայ չէին զարձնում ուշադրութիւնը խուզարկու մարդոյ: Մաշող հնութեան ձեռքը այստեղ էլ նկատվում է թէ անօթների և թէ ուրիշ զարդարանքի վերայ:

Կաթուղիկէն ունի չատ լուսամուտք, որոնք այնուամենայնիւ այնքան փոքր են, որ չեն հերիք պայծառ լուսաւորութեան համար: Դրսի տեսքը Մայր եկեղեցւոյ խորին հնութեան նշան է ցոյց տալիս, որովհետև տաչած քարը, որից չինած է եկեղեցին, մամռապատ են: Եկեղեցւոյն գլխաւոր մուտքը կազմում է գմբէթի երկու սիւների վերայ հաստատուած: Նորա աջ կողմում թաղած է Դանիէլ, իսկ ձախ կողմը՝ Ներսէս V կաթուղիկոսը, որպէս վկայում են տապանաքարերը: Սրան կից դրած պատի մէջ տապանաքարը ծածկում է նշխարք Անգլիացի Լորդ Մալքոլմի, որ մեռաւ իր ճանապարհորդութեան ժամանակ: Այս նշան է անխոհեր սիրոյ Հայոց եկեղեցւոյ դէպի ամենայն քրիստոնեայք և ճիշդ դրօշմ նորա աղատութեան ամին նախապաչարմունքից:

Մայր եկեղեցւոյ գաւթի չուրջ բռնած են զանազան չինութիւնք, սենեակներ, որոնք ընակարան են միաբանութեան: Գաւթի մէջ կայ և աղբիւր պատուական ջրոց հովանաւորած ուռենիներով: Կից այս չինութեանց կայ սեղանատուն, որ երկայն գահլիճ է, ուր կայ և երկար քարեայ սեղան, որից վայելելու հրաւիրվում են և եկաւոր ուխտաւորք, երբ լինում են հանդիսաւոր տօնախմբութիւնք:

Եկեղեցւոյ չրջաչինութեանց մէջ վերնայարկում կայ նոյնպէս տպարան: Սա ունի չորս մամուլ և մէկ արագատիպ. որը ընծայարերութիւն է պատուական և մեծապատիւ պ. Մկրտիչ Սանասարեանցի, բայց տարաբաղդաբար մինչև ցայսօր անգործութեան մէջն է թէև հազար բան կայ տպելու, որոնք փտում են դրադարանում: Ժամանակ է որ այս մասին մտածէին և պատուարժան սբ. հարք, հոգացողութիւն տանէին թանկագին ձեռագրիրների տպելու մասին, եթէ ոչ և ունեցած թանկագին աչխատանքը հողի քարի հետ կը քսվին, կը փչանան, ինչպէս որ ասում է երջանկայիշատակ Աբովեանը. ժամանակ է որ աչխարհ հանուէին Հայոց պահված գանձերը և ընդհանրանային և յայտնվէին լուսաւորիալ ազդերին, ինչ խորհուրդ կայ դրանց թագաւան մութ մառաններում դարսելուց, մինչ Ազգի պատմութիւնը դեռ չատ բան ունի պարզելու, չատ բան ունի հետազօտելու: Մինչ օրս տպած գրբերնքը հազիւ կէս տարուայ գործ են: Ըստ մեծի մասին տպագրութեան ժամանակը նուիրած է օրացոյցներին, և ժամանակին անյարմար «Արարատ» ամսագրին, որոյ ընթերցանութիւնը ցոյց է տալիս թէ ինչ ողորմելի դրութեան մէջն են մեր վերնաւոր Հոգևորականք՝ մի քանի բացառութեամբ: Ինքը Վրթանէս վարդապետն ի հարկէ այս լաւ է հասկանում, բայց դա վերաբաւուչ է մամուլի և ոչ աւելի կամ պակաս: Այս մասին մխիթարեանք առաւել լաւ հասկացան թէ ինչպէս պէտք է համակրութիւն և հարստութիւն Ազգից ձեռք բերել և գրաւել:

Տպարանը, կարծեմ, որ փողի պակասութիւն չունի հնութիւնքը տպելու համար. պէտք է որ ուրիշ օտար խորհուրդ լինի այստեղ: Թող ամեն մարդ այս վչտալի իրողութիւնը մեկնի ինչպէս որ ինքը կամենում է, ես դժուարանում եմ սորա մէջ մի բարի խորհուրդ նկատելու:

Ցիչելու է այստեղ որ Ազգիս տարաբաղդութիւնը չատ բան է կորցնել տուել գրաւոր յիչատակարերից, որք ցիր ու ցան պահպանվում էին ալեկոծեալ կրակ տուած հայրենիքում: Գլոսսիուս (Clossius), Դորբատեան համալսարանի իրաւաբանութեան պրոֆէսորը կամենալով իմանալ, թէ կան արդեօք Էջմիածնի գրադարանի մէջ իւր առարկային մասին ձեռագրիք, գրեց Հայոց Ցովհաննէս Կաթուղիկոսին այս մասին նամակ: Կաթուղիկոսի պատասխանը ցոյց է տալիս մի կողմանէ հարստութիւն գրականութեան, միւս կողմանէ նկարագրում է թշուառ օրեր, որ ազգի հետ կրեց նրա գրականութիւնը: Ահա պատասխանը. «1170-ին, գրում է Ցովհաննէս Կաթուղիկոսը, «Թուրքերը հրոյ ճարակ տուին Բէլբէկ քաղաքը և այնտեղ այրեցին 10,000 ձեռագիրներ. 1197 ին Ցոյնք անհնոյ աւերեցին քանդեցին Հայաստանը: 1380-ին Լենկթեմուրը 20 տարի ծայրէ ի ծայր քանդեց Հայոց երկիրն և հաւաքելով բոլոր Հայոց գրքերն ուղարկեց Սմըրղանդ և հրամայեց փակել գայնս անդ, և ինչպէս լսում ենք նորա բերդում կան մինչև ցայսօր: Ցետոյ աւերեց Հայաստանը Սկանդար 40 տարի, Շահ—Աբբաս 30 տարի, Նադիր—չահ 20 տարի... Թէ Հայոց դպրութիւնն այնպէս աւերած փչացած է, որ մեզ հասած է նոցանէ միայն 1000-ից իբրև ձեռագիր (Эчм. Кат. Брось. ст. 50)»:

Էջմիածնի պատերի մէջ յիչելու է և վեհարանն որ ձմեռուայ կացարանն է Նորին Վեհափառութեան կաթուղիկոսին և Սինոդ: Առաջինը չը յաջողեցաւ լինձ տեսնել ինձմէն անկախ պատճառից, իսկ երկրորդը մի քանի անգարդ և մութ սենեակներից է բաղկացած, և իմ կարծիքով առաւել պատուաւոր տեսքի և դրութեան արժանի քան ինչպէս է այժմ: Գործերը գրվում են ի հարկէ գրաբար, թէ և շատկան քահանայք, որոնք աչխարհականից առաւել չեն հասկանում:

Որովհետև Սինոդն ներկայացնում է Ազգային—Հոգևոր բարձրագոյն կառավարութեան կենդրոնն, նրան դժուար չէ ամեն տարի հաւաքել ի ձեռն թեմական առաջնորդաց վիճակագրական տեղեկութիւնք ոչ թէ միայն Ռուսաց ժամնի Հայաստանի, այլև Տաճկաց, Պարսկաց և այլն, և այլն: կարի մեծ հոգացողութիւն արած կլինէր ազգիս, եթէ աչխատ առնէր իրան կազմելու և տպագրելու վիճակագրական տեղեկութիւնք Հայոց ազգի մասին, յարակցելով սորան ազգային սովորութիւնք, վարք ու բարքն, ուսումնարանների դրութիւնն և դոցա մասին արած ծախսերն և ուրիշ կարևոր տեղեկութիւնք, որպէս զի ազգը իմանալով իր ցաւը վրազէր, չտապէր ուր հարկն է օգնութիւն հասնելու: կարիք չկայ սորա կարևորու-

(*) Տես Մեղու 1877 թ. № 8 և 11

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՒԱՔՈՒՄՆԵՐ

ՎԱՆԱՑ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

(Ի շարունակութիւն)

ԱՐՁԱԿԱՊԱՏՈՒՄ

Ի ՎԱՆԱՑ

1873

ՎԱՆԱՑ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

(Ի շարունակութիւն)

Ա. . . .

Ի ՎԱՆԱՑ

(Ի շարունակութիւն «ՊԵՐՈՆ ՀԱՅՈՑՆ ՎԱՆԱՑ»)

Ա. Մ ո մ խ ե ա ց

(Կ՚շարունակի)

*) Յետին ծղրտուքի ու սուս ու փուսի մէջ ձեզ ծանուցանենք, որ ի Վան ոչ մի տպագրատուն կայ, ուստի ամէն տպագրութիւն, որ կ՚ելնէ ի լոյս, ի Կ. Պոլսոյ կամ ի Զմիւռնիա կ՚ելնէ։ Ի. Ա.

Ներկայիս Ղրիմն ունի 547 եկեղեցի, ի որս 301 քահանայական տեղի ունին։ Ղրիմի հոգեւոր կառավարութիւնը կը գտնուի Սիմֆերոպոլ քաղաքին մէջ։ Ղրիմի հոգեւոր դասուն մէջ կը գտնուին 1 վարդապետ, 1 վանական եկեղեցական եւ 1 քահանայ

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐՑԵՐ

Ինչպե՞ս է Հայ եկեղեցին հարստացել

(Թուրքահայ «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»)

Ի ՊԱՏԱՍԽԱՆ

Ինչպե՞ս է Հայ եկեղեցին հարստացել։ Ինչպե՞ս է նա ունեցել այն հսկայական կալվածքները, որոնք նրան պատկանում էին մինչև 1915 թվականը։ Ինչպե՞ս է նա ունեցել այն հսկայական գումարները, որոնք նրա գանձարանում էին մինչև 1915 թվականը։ Ինչպե՞ս է նա ունեցել այն հսկայական գանձերը, որոնք նրա վանքերում էին մինչև 1915 թվականը։ Ինչպե՞ս է նա ունեցել այն հսկայական ոսկին, արծաթը, թանկարժեք քարերը, որոնք նրա սրբավայրերում էին մինչև 1915 թվականը։

Ահա հարցեր, որոնք հետաքրքրում են ամեն մի հայ մարդու։ Ահա հարցեր, որոնք հետաքրքրում են ամեն մի հայ ընտանիքի։ Ահա հարցեր, որոնք հետաքրքրում են ամեն մի հայ գյուղացու։ Ահա հարցեր, որոնք հետաքրքրում են ամեն մի հայ բանվորի։ Ահա հարցեր, որոնք հետաքրքրում են ամեն մի հայ մտավորականի։ Ահա հարցեր, որոնք հետաքրքրում են ամեն մի հայ կնոջ։ Ահա հարցեր, որոնք հետաքրքրում են ամեն մի հայ երեխայի։

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ ԵՒ Ընկ.

Տարի Բ. Համարը Ը. Համարը

ՀՈՒՇԱՐՁԱՆ

Ի ԼՈՒՍ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՆՈՒՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Ի ՀԱՅՐԱՊԱՏ ՍՐԲՈՅ ՀՈՐՆ ՄԵՐ ԿԻՐԱԿՈՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅՈՑ

Ի ՍՐԲԱԶՆՈՒՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅՈՑ

Ի ՍՐԲԱԶՆՈՒՆ ՄԱՏԹԷՈ